17)	Ֆաբրիկայի շինություններում, որոնց մթնոլորտում հնարավոր են մարդկանց առողջության համար վնասակար գազերի, աերոզոլների և այլ խառնուրդների կուտակումներ, վտանգավոր նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները բարձրանալու դեպքերում գործում են ազդարարման համակարգեր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 68				0,2	Տեսողական, փաստաթղթային	
18)	Ապարաջարդիչ մեքենաների ջարդիչների աշխատանքային գոտում ծծմբային հանքաքարի փոշու պայթյունը կանխելու նպատակով ապահովվում է՝	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 140						
ա.	օգտագործված գոլորշու կամ մանր փոշիացված ջրի մշտական մղումը (մատախլագոյացմամբ, բոցամղիչով) աշխատող ջարդման գոտի					0,05	Տեսողական	
բ.	ապարաջարդիչ մեքենայի վրա ստատիկ էլեկտրականության կուտակումներից ամբողջ էլեկտրատեխնիկական սարքավորումների, խողովակագծերի, մետաղե գազատարների, փոխակրիչների հենցի, բոլոր մետաղե կոնստրուկցիաների հողանցումը					0,05	Տեսողական	
19)	Ֆաբրիկայում ցիանավորման գործընթացի սարքավորումների տարողությունները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	հանդերձված են լուծույթների (խյուսի) պատահական արտահոսքի դեպքում նախագգուշացման ավտոմատ սարքերով	N 1051-Ն որոշում, հավելված, կետ 193						
20)	Կլանվածքագատման, ապակլանվածքագատման, վերականգնման, ռեագենտների պահման և նախապատրաստման շինությունները սարքավորված են աշխատանքային տեղերում շոգու մեջ կապտաթթվի պարունակության հսկողության ավտոմատ սարքերով՝ բլոկավորված ազդարարման համակարգի (ձայնային, լուսային) հետ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 208				0,1	Տեսողական, փաստաթղթային	
21)	Ապրանքային ռեագենտների էլեկտրոլիզի շինությունները սարքավորված են օդում թթուների գոլորշու և ջրածնի կոնցենտրացիան սահմանային թույլատրելի չափաքանակներից բարձրանալու դեպքում ահազանգման սարքերի լրակազմով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 214				0,2	Տեսողական, փաստաթղթային	
22)	Ռեագենտներ օգտագործող կազմակերպություններն ունեն դրանց պահման վտանգավորության դասին համապատասխան ռեագենտային ռեժիմի կիրառման մասին հրահանգ՝ հաստատված կազմակերպության ղեկավարության կողմից	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 220				0,1	Փաստաթղթային	
23)	Քսանտոգեն և ցիանիդ պարունակող տարաների բացումը, ինչպես նաև խիստ թունավոր նյութերի հետ կապված աշխատանքների կատարումը, լուծույթների պատրաստումը կատարվում է մեքենայացված եղանակով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 232				0,1	Տեսողական, փաստաթղթային	

24)	Յուրաքանչյուր ռեազենտի պահեստավորման տեղը նշվում է համապատասխան ռեազենտի անվան գրառմամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 239				0,05	Տեսողական, փաստաթղթային	
25)	Եռակցման աշխատանքները ռեազենտների պահեստներում և դրանց մոտակայքում ու պոմպակայանում կատարվում են ֆաբրիկայի ղեկավարության թույլտվությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 243				0,1	Տեսողական, փաստաթղթային	
26)	Թունավոր և պայթյունավտանգ գոլորշիներ առաջացնող ռեազենտների պահեստներում գործում են օդափոխության համակարգի աշխատանքի դադարեցման դեպքում՝ ձայնային և լուսային ազդարարման համակարգեր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 244				0,1	Տեսողական	
27)	Ռեազենտների պահեստներն ունեն մակարդակաչափեր՝ անշարժ տեղակայված հեղուկ ռեազենտների պահման տարողությունների համար	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 244				0,05	Տեսողական	
28)	Ռեազենտային բաժանմունքում առկա է ավտոմատ գործող ձայնային և լուսային ազդանշանների համակարգ՝ չաներում գտնվող ռեազենտների մակարդակի հսկման համար	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 248				0,1	Տեսողական	
29)	Բոլոր սարքերը և կայանքները, որոնք նախատեսված են ցիանով լցված անոթների բացման և բունկերների ու չանալուծիչների մեջ լցավորման, ինչպես նաև պատրաստի լուծույթների պահման համար, պատսպարված են, հերմետիկացված, ունեն տեղական արտածիչներ՝ բլոկավորված պահեստային օդափոխության կայանքի հետ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 250				0,1	Տեսողական	

30)	Յուրաքանչյուր ռեազենտի չան և պարզարան ունեն ռեազենտի մակարդակի չափը հսկող ցուցանակ, ավելցուկի հեռացման խողովակ, ինչպես նաև գրառում՝ ռեազենտի անվանման նշմամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 251				0,1	Տեսողական	
31)	Ռեազենտների բոլոր խողովակագծերը և տարողությունները ներկված են պայմանական գույներով, նշված են անվտանգության նշաններով և բացատրական գրառումներով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 252				0,05	Տեսողական	
9.	Գործատուն ընդունել է աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր.	Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, հոդված 85, մաս 2 և հոդված 248, մաս 3						
1)	Կազմակերպությունում առկա՞ է աշխատողների առողջության պահպանման սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարման միջոցառումների ծրագիր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 9 ենթակետ 2				0,2	Փաստաթղթային	
2)	Կազմակերպությունում առկա՞ է ճառագայթային վտանգ ներկայացնող ստորերկրյա հանքավայրերի՝ ճառագայթային անվտանգության համար պատասխանատուներ, անձնակազմի կատեգորիավորումը, անձնակազմի դոզիմետրիկ հսկողության համակարգը և անձնակազմի անհատական պաշտպանության կազմակերպման կարգը սահմանող ճառագայթային անվտանգության ծրագիր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 166				0,1	Փաստաթղթային	

3)	Լուծագատման եղանակով ստորերկրյա հանքավայրերի մշակման նախագծերում նախատեսված են միջոցառումներ՝ կանխելու արգասավոր լուծույթների մուտքը դեպի տրանսպորտային և աշխատողների տեղաշարժի փորվածքներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 185				0,1	Փաստաթղթային	
4)	Կազմակերպության ղեկավարության կողմից հաստատված է ուսումնամեթոդական ծրագիր, որում ներառված են էլեկտրահարումից և այլ վնասվածքային գործոններից տուժած մարդկանց ազատելու, նրանց առաջին օգնությունը ցույց տալու եղանակների մասին կազմակերպության բոլոր աշխատողների ուսուցանման հարցերը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 331				0,1	Փաստաթղթային	
5)	Օգտակար հանածոների ստորերկրյա եղանակով մշակվող հանքավայրերի մշակման, գործող հանքի վերակառուցման նախագծով սահմանված են հանքում աշխատողների կյանքը և առողջությունը վնասակար գործոնների ազդեցությունից պաշտպանելու միջոցառումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 414				0,2	Փաստաթղթային	
6)	Բացահանք շահագործող կազմակերպությունում առկա է աշխատողների առողջության պահպանման սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարման միջոցառումների ծրագիր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 12				0,2	Փաստաթղթային	
7)	Նախագծով սահմանվել են բացահանքի լցակույտի տեղադրվածության, ծավալների, ձևավորման ու շահագործման, ինչպես նաև փլվածքների լցավորման աշխատանքների անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 57				0,1	Տեղեկական, փաստաթղթային	

8)	Նախագծով սահմանվել են բացահանքի լցակույտը ճահճացած կամ ոչ ջրաքաշված տարածքում տեղադրելու աշխատանքների անվտանգ կատարման միջոցառումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 62				0,1	Տեսողական, փաստաթղթային	
9)	Առկա՝ են գործատուի կողմից հաստատված հրահանգներ՝ տեխնիկական անվտանգության ապահովման հարցերով բացահանքի ավտոտրանսպորտային միջոցներ վարող աշխատողների հրահանգավորման համար	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 112				0,1	Տեսողական, փաստաթղթային	
10)	Բացահանքի մեքենասարքավորումների վերանորոգման աշխատանքների կատարման համար կազմվել են աշխատանքի անվտանգ կատարման հրահանգներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 185				0,1	Տեսողական, փաստաթղթային	
11)	Հաստատվել են գարնան ու աշնանը, ինչպես նաև ձնհալի և հորդ անձրևների ժամանակ, բացահանքի աշխատանքների անվտանգությունն ապահովող միջոցառումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 288				0,05	Տեսողական, փաստաթղթային	
12)	Նախագծով սահմանվել են հին ջրածածկ փորվածքների կամ այլ ջրավազանների (զետեր, լճեր, արհեստական լճակներ) մոտակայքում բացահանքի լեռնային աշխատանքների անվտանգ կատարման պայմանները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 289				0,05	Տեսողական, փաստաթղթային	
13)	Ճառագայթային վտանգ ներկայացնող բացահանքերում առկա է ճառագայթային անվտանգության ծրագիր, որով սահմանված են անձնակազմի կատեգորիավորման և անձնակազմի դոզիմետրիկ հսկողության համակարգը, ինչպես նաև՝ անձնակազմի անհատական պաշտպանության կազմակերպման կարգը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 325				0,1	Տեսողական, փաստաթղթային	

14)	Օգտակար հանածոների հարստացման ֆարբիկայի արտադրամասերում շահագործվող յուրաքանչյուր սարքավորման և ագրեգատի համար հաստատված է արտադրական գործընթացի անվտանգության հրահանգ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 13				0,2	Տեսողական, փաստաթղթային	
15)	Վերանորոգման նպատակով օգտակար հանածոների հարստացման ֆարբիկայի բունկերների կամ ընդունիչ ձագարների մեջ մարդկանց իջեցնելու համար արտադրամասի ղեկավարի կողմից կազմվում է սահմանված կարգին համապատասխան կարգադրագիր-թույլտվություն և աշխատանքների կազմակերպման պլան	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 94				0,1	Տեսողական, փաստաթղթային	
16)	Օգտակար հանածոների հարստացման ֆարբիկայի ապարաջարդիչ մեքենայի աշխատանքային գոտու տարածքում լեռնային զանգվածի կախվածքների վերացման համար հաստատված է հրահանգ, որով սահմանված են աշխատանքների անվտանգ կազմակերպման մեթոդները, կախվածքների վերացման հաջորդականությունը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 97				0,1	Տեսողական, փաստաթղթային	
17)	Լվացման թմրկազլանների և գրավիտացիոն հարստացման ապարատների զննման, վերանորոգման, ներքին մակերևույթները խլուսից ու մնացած հանքանյութից մաքրման աշխատանքների համար հաստատված է գազավտանգ աշխատանքների անվտանգ կատարման հրահանգ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 151				0,1	Տեսողական, փաստաթղթային	
18)	Ռեազենտների թմրուկների բացման, խոշոր կտորների մանրացման, բաք-լուծիչների մեջ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	դրանց բեռնավորման դեպքերի համար անվտանգության պահանջները սահմանված են ֆաբրիկայի ղեկավարի կողմից հաստատված աշխատանքային հրահանգներում	N 1051-Ն որոշում, հավելված, կետ 253						
19)	Կազմակերպության ղեկավարի կողմից սահմանված է ֆաբրիկայի և դրան հարակից արտադրամասերի տարածքում ավտոմեքենաների երթևեկության կարգը և արագությունը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 325				0,1	Տեսողական, փաստաթղթային	
20)	Առկա է ռադիոակտիվ նյութեր պարունակող հանքաքար մշակող օգտակար հանածոների հարստացման ֆաբրիկայում ճառագայթային անվտանգության ծրագիր, որով սահմանված են ճառագայթային անվտանգության համար պատասխանատուները, ներօբյեկտային և շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի համակարգերը, անձնակազմի կատեգորավորման նրանց դոզիմետրիկ հսկողության համակարգը և անձնակազմի անհատական պաշտպանության կազմակերպման կարգը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 401				0,1	Տեսողական, փաստաթղթային	
21)	Պայթեցման աշխատանքների կատարման նախագծերը ներառում են աշխատանքների անվտանգ կատարման հարցերը, վտանգավոր գոտու սահմանները, դրանց մեջ գտնվող շենքերի, շինությունների, կառույցների պահպանման և տարածքի օդափոխության հարցերը	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետեր 92 և 198				0,1	Տեսողական, փաստաթղթային	
22)	Կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված նախագծով սահմանված են	Կառավարության 2008 թվականի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	զանգվածային պայթեցումների նախապատրաստման և կատարման ժամանակ վտանգավոր գոտիների սահմանները, մարդկանց գտնվելու տեղերը և պայթուցիկ նյութերի տեղավորման հետ կապված հարցերը	մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 123						
10.	Գործատուն ապահովել է աշխատանքի անվտանգ կատարման կազմակերպման պահանջների պահպանումը.	Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, հոդված 248, մաս 1						
1)	Հանքավայրերում մարտկոցների լիցքավորման կայանում անհատական օգտագործման լամպերի տրման հիման վրա կատարվում է ստորերկրյա փորվածք մտնող և դուրս եկող մարդկանց ստույգ հաշվառում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 14				0,1	Տեսողական, փաստաթղթային	
2)	Ստորերկրյա հանքում աշխատանքները կատարելու համար տեղամասի ղեկավարի (հերթափոխի) վարպետի կողմից տրվում է գրավոր կարգադրագիր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 24				0,1	Փաստաթղթային	
3)	Միաժամանակ ստորերկրյա և բաց եղանակով մշակվող հանքավայրում իրականացվում են օդափոխության համակարգերի, օդի բաղադրության ստուգումներ, պայթյունի հետևանքով առաջացած թունավոր գազերի ու նյութերի չեզոքացում, բաց հանքից դեպի ստորերկրյա փորվածքներ ջրերի հոսքի կանխում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 28				0,1	Փաստաթղթային	
4)	Ստորերկրյա հանքում պահպանվում են նախքան օգտագործվող մեքենաների, մեխանիզմների և	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի						

	սարքավորումների գործարկումը անվտանգության ապահովման պահանջները՝	N 1049-Ն որոշում, հավելված, կետ 35						
ա.	մեքենավարը նախքան մեքենան գործարկելը, համոզվում է մեքենայի գործողության սահմաններում գտնվող անձանց անվտանգության մեջ և տալիս է նախազգուշական ձայնային ազդանշան					0,1	Տեսողական,	
բ.	ձայնային ազդանշանի տևողությունը 6 վրկ-ից ոչ պակաս է և լսելի է վտանգավոր գոտու ամբողջ տարածքում					0,1	Տեսողական,	
գ.	Ձայնային ազդանշանի աղյուսակը փակցված է աշխատող մեխանիզմի վրա կամ դրա մոտակայքում և տեսանելի է ցանկացած տեսադաշտից					0,05	Տեսողական,	
դ.	ազդանշանի նշանակությանը ծանոթ են մեքենան (մեխանիզմը) սպասարկող բոլոր աշխատողները					0,05	Տեսողական, փաստաթղթային	
5)	Փորվածքները, որոնք ծառայում են որպես լրացուցիչ ելքեր, ստուգվում են ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 44				0,05	Փաստաթղթային	
6)	Բոլոր գործող փորվածքների պահպանման, դրանց ամրակապի, սարքավորումների, օդափոխության կառուցվածքների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար կազմակերպության ղեկավարի հրամանով նշանակված են տեխնիկական պատասխանատու անձինք	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 61				0,1	Փաստաթղթային	
7)	Գործող փորվածքների հանքահանման գծերի, դրանց վերանորոգման որակի և օդափոխման	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	սարքավորումների վիճակը ստուգվում է յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում հերթափոխի ղեկավարի (լեռնային վարպետի) կողմից, իսկ տեղամասերում՝ ամեն օր՝ տեղամասի ղեկավարի կողմից	N 1049-Ն որոշում, հավելված, կետ 62						
8)	Մարդկանց տեղափոխման և բեռների փոխադրման համար նախատեսված ուղղաձիգ և թեք փորվածքների ամրակապերը ստուգվում են ամեն օր՝ հանքի ղեկավարի կողմից նշանակված անձի միջոցով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 64				0,1	Տեսողական, փաստաթղթային	
9)	Ստորերկրյա հանքի հանքահանման փորվածքներում մաքրահանումն իրականացվում է միայն նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումներն ամբողջովին իրականացնելուց հետո	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 71				0,1	Տեսողական, փաստաթղթային	
10)	Հանքում տեխնաձին վթարի դեպքում, աշխատանքների վերսկսումը կատարվում է միայն վթարի հետևանքների ամբողջությամբ վերացումից հետո՝ կազմակերպության ղեկավարության գրավոր թույլտվությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 74				0,1	Տեսողական, փաստաթղթային	
11)	Մաքրահանման աշխատանքները հարակից հարկերում միաժամանակ կատարվում են միայն այն դեպքերում, երբ վերևի հարկի մաքրման հանքախորշը ներքևի հարկի հանքախորշի նկատմամբ առաջ է անցել նախագծով սահմանված չափով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 75				0,1	Տեսողական, փաստաթղթային	
12)	Հերթափոխի սկզբում և աշխատանքների կատարման ընթացքում հանքախորշում ստուգվում է փորվածքի առաստաղի և կողերի կայունությունը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 79				0,1	Տեսողական, փաստաթղթային	

13)	Պահպանվում է կեռաշերտի աշխատանքի ժամանակ կեռաշերտիային ուղու վրա կամ կեռաշերտի մետաղաճառանի գործողության գոտում աշխատողների չգտնվելու պահանջը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 80				0,1	Տեսողական, փաստաթղթային	
14)	Պահպանվում են ռադիոակտիվ նյութեր պարունակող օգտակար հանածոների ստորերկրյա հանքավայրերի անձնակազմի՝ ճառագայթային անվտանգության հարցերով պատրաստման և ճառագայթային վտանգավոր աշխատանքների կատարման թույլտվության միջոցառումների ներդրման ապահովման պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 168				0,1	Տեսողական, փաստաթղթային	
15)	Եթե բացառիկ դեպքերում Ռադիոակտիվ նյութեր պարունակող ստորգետնյա հանքի հորիզոնների, լեռնանցման հանքախորշերի, բլոկների օդի էլքային շիթերի վրա կազմակերպված են մշտական աշխատանքային տեղեր, մշակված են հատուկ միջոցառումներ, որոնք կապահովեն անձնակազմի ճառագայթային անվտանգությունը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 171				0,1	Տեսողական, փաստաթղթային	
16)	Էլեկտրատեղակայանքների և էլեկտրացանցերի անվտանգ սպասարկման համար կազմակերպության ղեկավարության հրամանով նշանակվել են տեխնիկական պատասխանատու անձինք	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 329				0,1	Տեսողական, փաստաթղթային	
17)	Ստորերկրյա հանքի աշխատողներն ապահովված են կապի միջոցներով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 372				0,1	Տեսողական	
18)	Ստորերկրյա հանքում փորվածքներով մարդկանց տեղաշարժը, ինչպես նաև աշխատանքները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական	

	կատարվում են միացված անհատական կուտակիչային լամպերի կիրառմամբ	N 1049-Ն որոշում, հավելված, կետ 378						
19)	Ստորերկրյա հանքը ապահովված է հանքի աշխատողների ցուցակային թվից 10%-ով ավելի և սարքին վիճակում գտնվող կուտակիչային լամպերով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 378				0,1	Տեսողական, փաստաթղթային	
20)	Կուտակիչային լամպերի ամսական պարբերականությամբ ստուգման արդյունքները ձևակերպվում են ակտով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 379				0,05	Տեսողական, փաստաթղթային	
21)	Հանքավայրի հորիզոններում, բլոկներում և հանքահանման հանքահորերում և այլ փորվածքներում նախատեսված են փոշու դեմ պայքարի սարքավորումներ, փոշենստեցման միջոցների անվանացանկ, դրանց աշխատանքային ռեժիմը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 415				0,1	Տեսողական, փաստաթղթային	
22)	Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ փոշու և գազերի նստեցման համար օգտագործվում են հատուկ միջոցներ (մշուշաստեղծ սարք, ջրափրփուր և այլն)	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 420				0,2	Տեսողական, փաստաթղթային	
23)	Ստորերկրյա հանքի հիմնական լեռնային փորվածքներում, տրանսպորտային միջոցներում և ցնցողարանի մաքուր հանդերձարաններում առկա՝ են առաջին օգնության համապատասխան միջոցներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 434				0,05	Տեսողական	
24)	Հերթափոխի ղեկավարի կողմից գրավոր կարգադրությունը տրվում է միայն հերթափոխից առաջ բացահանքի յուրաքանչյուր աշխատատեղի համալիր գնումից հետո՝ անվտանգ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 15				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	աշխատատեղերում աշխատանքներ կատարելու համար								
25)	Անմիջապես հանքախորշում, հանքաստիճանների, շեպերի մոտ, ինչպես նաև աշխատող մեքենասարքավորումների և տրանսպորտային ուղիների վրա աշխատողները չեն հանգստանում կամ զբաղվում այլ գործունեությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 17				0,05	Տեսողական		
26)	Նախքան մեքենասարքավորումների գործարկելն ու տրանսպորտային միջոցների շարժը տրվում են աշխատանքային գոտում գտնվող բոլոր աշխատողներին լսելի (տեսանելի) ձայնային և լուսային ազդանշաններ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 18				0,1	Տեսողական		
27)	Սողանքի հակում ունեցող բացահանքերում կազմակերպվում են սողանքային մարմնի դինամիկայի ռեժիմային դիտարկումներ (մոնիթորինգ), և դրանց հիման վրա իրականացվում են համապատասխան միջոցառումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 36				0,2	Տեսողական, փաստաթղթային		
28)	Բացահանքում իրականացվում են հանքաստիճաններում կախված հանքաքարի և ապարի բեկորների վտանգագերծում, խորաճեղքերի վերացում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 37				0,1	Տեսողական, փաստաթղթային		
29)	Պահպանվում են կախված հանքաքարի կամ ապարի բեկորների տակ աշխատողների գտնվելու կամ աշխատանքների կատարումն արգելելու պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 37				0,1	Տեսողական, փաստաթղթային		
30)	Հնարավոր փլուզումների և անկումների գոտում աշխատելու ժամանակ բացահանքի կողերը և	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային		

	հատակը ենթարկվում են մարկշեյդերական մանրագնին դիտարկման	N 1050-Ն որոշում, հավելված, կետ 41						
31)	Ապարների տեղաշարժի երևույթներ նկատելու դեպքում բոլոր աշխատանքները դադարեցվում են և վերսկսվում են միայն փորձաքննություն անցած նախագծին համապատասխան վերսկսելու պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետեր 36 և 41				0,1	Տեսողական, փաստաթղթային	
32)	Միաժամանակ բաց և ստորերկրյա եղանակով մշակվող հանքավայրում իրականացվում են բաց և ստորերկրյա աշխատանքներում աշխատողների անվտանգությունն ապահովող միջոցառումներ՝ օդափոխության համակարգերի, մթնոլորտի վիճակի ստուգում, պայթյունի արդյունքում առաջացած թունավոր գազերի, նյութերի, ջրերի՝ բացահանքից ստորերկրյա փորվածքներ ներթափանցման վտանգի, բացահանքի հատակի բնամասի փլուզումների կանխում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 43				0,1	Տեսողական, փաստաթղթային	
33)	Բացահանքի լցակույտերի շեպի վրա, դրանց հիմքի մոտակայքում և տրանսպորտային միջոցների բեռնաթափման գոտում տեղադրված են մարդկանց գտնվելու վտանգավորության մասին նախագուշացնող ցուցանակներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 66				0,05	Տեսողական	
34)	Ավտոմեքենաները և տրանսպորտային այլ միջոցները լցակույտում բեռնաթափվում են նախագծով նախատեսված տեղում, փլուզման կամ սողանքի հնարավոր հատվածակողմից դուրս	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 67				0,1	Տեսողական, փաստաթղթային	

35)	Լցակույտի հրապարակը համահարթեցնելիս շեպի եզրին բուլդոզերը մոտենում է դանակով դեպի առաջ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 69				0,1	Տեսողական, փաստաթղթային	
36)	Պահպանվում են բեռնաթափման հրապարակում աշխատող ինքնաթափ մեքենաների և բուլդոզերների աշխատանքային գոտում, աշխատող մեխանիզմից մինչև 5 մետր հեռավորության վրա մարդկանց գտնվելու կամ աշխատանքներ կատարելու արգելման պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 76				0,1	Տեսողական, փաստաթղթային	
37)	Էքսկավատորի տեղաշարժը կատարվում է մեքենավարի օգնականի տված ազդանշաններով՝ ապահովելով նրա և մեքենավարի մշտական փոխադարձ տեսանելիությունը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 85				0,1	Տեսողական	
38)	Պահպանվում են հանքաստիճանի, լցակույտի կողի, տրանսպորտային միջոցի և էքսկավատորի հակակշռի միջև 1 մետրից ոչ պակաս հեռավորությունները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 86				0,1	Տեսողական	
39)	Պահպանվում են էքսկավատորի աշխատանքի ժամանակ մեքենավարի կողմից սահմանված կարգին համապատասխան ազդանշաններ տալու պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 87				0,1	Տեսողական, փաստաթղթային	
40)	Գործատուն սահմանել է բացահանքերի ճանապարհներին ավտոմեքենաների և տրակտորների երթևեկության արագությունը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 107				0,1	Տեսողական, փաստաթղթային	

41)	Ավտոմեքենայի հետընթացքով շարժման ժամանակ տրվում է անընդհատ ձայնային ազդանշան	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 118				0,1	Տեսողական	
42)	Պահպանվում են քարհատ մեքենաների աշխատանքի ժամանակ աշխատանքի անվտանգ կազմակերպման պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետեր 198, 203, 207				0,2	Տեսողական	
43)	Պահպանվում են ավտոմեքենայի թափքը բարձելիս բլոկները խցիկի վրայով տեղափոխելու, մեքենայի խցիկում կամ ոտնատեղի վրա, կամ տեղափոխվող բեռի տակ վարորդի կամ սպասարկող աշխատողների գտնվելու, կամ ավտոմեքենայի գնումամբ զբաղվելու արգելման պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 222				0,1	Տեսողական, փաստաթղթային	
44)	Բացահանքում հոսանքագծերում մարդկանց աշխատելու դեպքում անջատված գործարկիչների, ավտոմատների և բարձրավոլտ բաշխիչ սարքերի բռնակին փակցվում է ազդագիր՝ «Չմիացնել, մարդիկ են աշխատում» գրառմամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 230				0,1	Տեսողական	
45)	Բացահանքը սարքավորված է տեխնոլոգիական գործընթացների ղեկավարումը, հսկողությունն ու աշխատանքների անվտանգությունը, օպերատիվ դիսպետչերական կառավարումն ապահովող տեխնիկական միջոցների համալիրով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 282				0,1	Տեսողական	
46)	Լեռնային զանգվածի շերտիման, ինչպես նաև ավտոճանապարհների շահագործման ժամանակ փոշեգոյացումը նվազեցնելու նպատակով տաք	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	եղանակներին կատարվում է լեռնային գանգվածի ռոտզում	N 1050-Ն որոշում, հավելված, կետ 314						
47)	Կազմակերպությունում ներդրված են ճառագայթային վտանգավոր աշխատանքների կատարման թույլտվության միջոցառումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 328				0,1	Տեսողական, փաստաթղթային	
48)	Հարստացման ֆաբրիկայի մեխանիզմների, մեքենաների, տրանսպորտային միջոցների գործարկումն սկսելուց առաջ տրվում է ձայնային ազդանշան, որոնց նշանակության մասին ծանոթ են բոլոր աշխատողները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետեր 21, 50				0,1	Տեսողական, փաստաթղթային	
49)	Տրվող ազդանշանների աղյուսակը փակցված է աշխատող մեխանիզմի վրա կամ դրա մոտակայքում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետեր 21, 50				0,05	Տեսողական, փաստաթղթային	
50)	Ֆաբրիկայի աշխատողներին արգելված է հանգստանալ կամ այլ գործունեությամբ զբաղվել աշխատող մեխանիզմների մոտակայքում, տրանսպորտային ուղիների ու սարքավորումների վրա, ծխել կամ սնունդ ընդունել անմիջապես աշխատատեղում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 22				0,1	Տեսողական	
51)	Ֆաբրիկայում աշխատատեղերը և մարդկանց անցատեղերը մաքուր վիճակում են, աշխատատեղերում առկա չեն տարբեր իրեր, առարկաներ, մեքենաների մասեր, մետաղի ջարդոն և արտադրական թափոններ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 25				0,1	Տեսողական	
52)	Վառելիքաքսուքային, սրբող, մաքրող նյութերն աշխատանքային տեղերում պահվում են փակ մետաղե անոթներում, իսկ հեշտ բռնկվող	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական	

	նյութերը (բենզին, նավթ և այլն)՝ աշխատանքային տեղերից դուրս	N 1051-Ն որոշում, հավելված, կետ 34						
53)	Պահպանվում են բունկերներում հանքաքարի կուտակումների, կախվածքների, անցափակումների վերացման համար աշխատողներին բունկեր իջեցնելու արգելման պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 91				0,1	Տեսողական, փաստաթղթային	
54)	Ապարաջարդիչ մեքենայի աշխատանքային գոտու տարածքում հանքաքարի մեծ կտորների խցանումները վերացնելու համար կիրառվում են հատուկ հարմարանքներ ունեցող ամբարձիչ սարքավորումներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 98				0,1	Տեսողական, փաստաթղթային	
55)	Աղացի ներսում աշխատանքները կատարվում են միայն տեխնիկական պատասխանատու անձի ներկայությամբ՝ ֆաբրիկայի ղեկավարության կողմից տրված կարգադրագիր-թույլտվությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 110				0,1	Տեսողական, փաստաթղթային	
56)	Կոնտեյներների մեջ մետաղագոյերի բարձրման տեղերը ցանկապատված են և կախված է «Վտանգավոր է» գրառմամբ ցուցատախտակ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 112				0,1	Տեսողական	
57)	Հերթափոխի տեխնիկական ղեկավարը, ղեկավարության կողմից հաստատված հրահանգի համաձայն, ստուգում է ռեագենտային հարթակի վրա աշխատողների անհատական պաշտպանության միջոցների առկայությունն ու դրանց սարքին վիճակը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 122				0,1	Տեսողական, փաստաթղթային	
58)	Ֆաբրիկայի օդափոխման համակարգերի և ռեագենտախողովակների հիմնական նորոգման, զննման, մաքրման, վնասազերծման աշխատանքները կատարվում են	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 224				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	պատասխանատու անձի կողմից տրված աշխատանքների ծավալի և անվտանգության միջոցառումների նշամաբ կարգադրագիր-թույլտվության հիման վրա							
59)	Ագրեսիվ թթուների և ալկալիների խողովակագծերը անցկացված չեն աշխատանքային հարթակների և անցատեղերի վրայով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 231				0,1	Տեսողական	
60)	Էքսկավատորի աշխատանքի ժամանակ մարդիկ գտնվում են դրա շերտի գործողության գոտուց դուրս	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 260				0,1	Տեսողական	
61)	Հանքաքարի, խտանյութի և ոչ հանքային նյութերի պահեստներում աշխատանքի ժամանակ բուլդոզերը չի թողնվում առանց հսկողության, աշխատող շարժիչով և բարձրացված հարթաշերտով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 263				0,05	Տեսողական	
62)	Ֆաբրիկայի հոսանքագծերում մարդկանց աշխատելու ժամանակ անջատված գործարկիչների, ավտոմատների և բարձրավոլտ բաշխիչ սարքերի բռնակին փակցվում է ազդագիր՝ «Չմիացնել, մարդիկ են աշխատում» գրառմամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 271				0,1	Տեսողական	
63)	Ֆաբրիկայում 1000 Վ-ից բարձր լարմամբ կայանքներում կարգադրագրով աշխատանքները կատարվում են պատասխանատու անձի ներկայությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 304				0,1	Տեսողական, փաստաթղթային	
64)	Էլեկտրաֆիլտրի կամ դրա առանձնամասերի ներքին զննումը և վերանորոգումը կատարվում են միայն գրավոր կարգադրագիր-	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	թույլտվությամբ՝ էլեկտրաֆիլտրի շահագործման համար պատասխանատու անձի անմիջական մասնակցությամբ	N 1051-Ն որոշում, հավելված, կետ 313						
65)	Պահպանվում են ավտոմեքենայից հանքաքարը ընդունման բունկերի բեռնահարթակում բեռնաթափելիս աշխատանքի անվտանգ կատարման կազմակերպման պահանջները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 326				0,1	Տեսողական, փաստաթղթային	
66)	Բեռնաթափումից հետո ավտոմեքենայի շարժն իրականացվում է իջեցված թափքով, իսկ հետընթաց շարժումը՝ անընդհատ ձայնային ազդանշաններ տալուց հետո	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 327				0,1	Տեսողական	
67)	Հալած ցինկով բունկերի ներպատվածքի լցումը կատարվում է միայն տեխնիկական պատասխանատու անձի անմիջական ղեկավարությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 381				0,1	Տեսողական	
68)	Եռակցման աշխատանքները փակ տարողություններում կատարվում են երկու անձանց մասնակցությամբ, որոնցից մեկը գտնվում է տարողությունից դուրս և իրականացնում է հսկողություն աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 396				0,1	Տեսողական, փաստաթղթային	
69)	Ռադիոակտիվ նյութեր պարունակող հանքաքար մշակող ֆաբրիկայում գործում է ճառագայթային հսկողության օբյեկտային ծառայություն	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 400				0,1	Տեսողական, փաստաթղթային	
70)	Ֆաբրիկայի հիմնական բաժանմունքներում, ինչպես նաև ցնցողարանի հանդերձարաններում առկա են առաջին օգնության համապատասխան միջոցներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 444				0,05	Տեսողական	

71)	Պայթեցման աշխատանքներ կատարող աշխատողները պայթուցիկ նյութի հետ միասին աշխատավայր են հասցվում միայն այդ նպատակի համար հատուկ սարքավորված ավտոմեքենաներով՝ ուղեկցող անձանց հսկողությամբ	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 25				0,1	Տեսողական, փաստաթղթային	
72)	Ստորգետնյա հանքավայրեր պայթուցիկ նյութերի փոխադրումն իրականացվում է անվտանգության պահանջներին համապատասխանող և այդ նպատակների համար սարքավորված հանքի փոխադրամիջոցներով	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 27				0,1	Տեսողական, փաստաթղթային	
73)	Պայթուցիկ նյութերի բեռնաբարձման, բեռնաթափման և հանքափողով փոխադրման ժամանակ մերձհանքափողային բակում և վերհանքային շենքում ներկա են լինում միայն պայթեցնողը, պայթուցիկ նյութը բաշխողը, բեռնող և բեռնաթափող անձինք, հանքափողն սպասարկողը և պայթուցիկ նյութը փոխադրելու համար պատասխանատու անձը	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 29				0,1	Տեսողական, փաստաթղթային	
74)	Ստորգետնյա փորվածքներում պայթուցիկ նյութերը և պայթեցման միջոցները պահվում են առանց հսկողության, եթե դրանք տեղավորված են պահման հատուկ տեղերում՝ տեղամասային կետերում, կողպված մետաղյա արկղերում կամ բեռնարկղերում	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 37				0,1	Տեսողական	
75)	Աշխատատեղերում մինչև լիցքավորումը պայթուցիկ նյութերը և պայթեցման միջոցները պահվում են օրական պահանջի չափով՝ վտանգավոր գոտուց դուրս	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 39				0,1	Տեսողական, փաստաթղթային	

76)	Աշխատատեղերում մինչև լիցքավորումը պայթուցիկ նյութերը և պայթեցման միջոցները պահվում են հերթափոխի պահանջի չափով՝ վտանգավոր գոտու սահմաններում	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 39				0,1	Տեսողական, փաստաթղթային	
77)	Ջանգվածային պայթեցումներ կատարելու ժամանակ վտանգավոր գոտում պահվում են լիցքավորման համար անհրաժեշտ քանակի պայթուցիկ նյութեր և պայթեցման միջոցներ	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 39				0,1	Տեսողական, փաստաթղթային	
78)	Պայթուցիկ նյութերի և պայթեցման միջոցների ոչնչացումը կատարվում է պայթեցնողների կողմից, պայթուցիկ նյութի պահեստապետի մասնակցությամբ, կազմակերպության ղեկավարի կողմից նշանակված պատասխանատու անձի ղեկավարությամբ	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 42				0,1	Տեսողական, փաստաթղթային	
79)	Պահպանվում է Էլեկտրադետոնատորների կիրառմամբ պայթեցումների ժամանակ պայթեցնողի թաքստոցից՝ պայթեցումից 5 բուպեից ոչ շուտ և միայն Էլեկտրապայթեցման ցանցն Էլեկտրական հոսանքի աղբյուրից անջատելուց հետո դուրս գալու արգելքը	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 68				0,1	Տեսողական, փաստաթղթային	
80)	Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ մարդկանց զգուշացնելու համար տրվում են ձայնային, իսկ մութ ժամանակ նաև լուսային ազդանշաններ	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 98				0,1	Տեսողական	
81)	Ազդանշանները տրվում են պայթեցման աշխատանքներ կատարող պայթեցնողի կողմից, իսկ զանգվածային պայթեցման ժամանակ՝ կազմակերպության ղեկավարության կողմից հատուկ նշանակված աշխատողի կողմից	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 99				0,1	Տեսողական, փաստաթղթային	

82)	Պայթանցքերի (հորատանցքերի) լիցքավորումը 2 մ-ից ավելի բարձրության վրա կատարվում է հատուկ սարքավորված, աշխատանքի անվտանգությունն ապահովող ամբարձիչի հարթակներից	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 108				0,1	Տեսողական	
83)	Լիցքավորող մեքենաների, լիցքավորիչների և մեքենայացված լիցքավորման այլ միջոցների վերանորոգումը կատարվում է այդ նպատակի համար սարքավորված շինություններում (լեռնային փորվածքներում)	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 122				0,1	Տեսողական, փաստաթղթային	
84)	Յուրաքանչյուր չպայթած լիցք գրանցվում է պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ պայթալիցքերի խափանումների հաշվառման գրանցամատյանում	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 125				0,1	Տեսողական, փաստաթղթային	
85)	Պայթեցման աշխատանքների կատարման կարգադրագրի-ուղեգրի մեջ կատարվում է նշում նախորդ հերթափոխում չպայթած լիցքի վնասագերծման աշխատանքները անավարտ մնալու վերաբերյալ	Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի N 291-Ն որոշում, կետ 133				0,1	Տեսողական, փաստաթղթային	
11.	Գործատունն ապահովել է աշխատողների աշխատանքի անվտանգ կատարման ուսուցումը, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության հրահանգավորումը.	Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, հոդված 254 և հոդված 247-ի մաս 3						
1)	Օգտակար հանաժոնների հանքավայրերում ստորերկրյա եղանակով արդյունահանում իրականացնող կազմակերպությունում աշխատող ինժեներատեխնիկական անձնակազմը և	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 6				0,1	Փաստաթղթային	

	մասնագետները անցել են տեխնիկական անվտանգության հարցերով ուսուցում							
2)	Կազմակերպությունում նոր աշխատանքի ընդունված յուրաքանչյուր աշխատող, նախքան իր պարտականությունների կատարումը, անցնում է նախնական ուսուցում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 15				0,1	Տեսողական, փաստաթղթային	
3)	Ստորերկրյա հանքում աշխատող անձինք կազմակերպության ղեկավարության կողմից հաստատված ուսումնամեթոդական ծրագրերի համաձայն անցնում են ուսուցում և գիտելիքների ստուգում իրենց մասնագիտության գծով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 17				0,1	Տեսողական, փաստաթղթային	
4)	Ստորերկրյա հանքում բոլոր աշխատողները, ոչ ուշ, քան տարին երկու անգամ, ստանում են տեխնիկական անվտանգության պահանջների իմացության հարցերով հրահանգավորում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 18				0,1	Տեսողական, փաստաթղթային	
5)	Ստորերկրյա հանքում նոր աշխատանքի ընդունված անձինք ծանոթացվում են հանքից դեպի երկրի մակերևույթ դուրս եկող հիմնական և օժանդակ ելքերին	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 19				0,1	Տեսողական, փաստաթղթային	
6)	Ստորերկրյա հանքի բոլոր աշխատողները ուսուցանված են հանքի փորվածքներում և դրանց հատման տեղերում, ինչպես նաև աշխատատեղերում տեղակայված համապատասխան ցուցանակների, նախազգուշական, թույլատրող և արգելող պլակատների, գրառումների և նշանների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 20				0,1	Տեսողական, փաստաթղթային	
7)	Ստորերկրյա հանքում, այլ կազմակերպություններից պայմանագրային հիմունքներով աշխատանքներ կատարող	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	մասնագետները, նախքան աշխատանքները սկսելը, կազմակերպության ղեկավարության կողմից հաստատված ուսումնամեթոդական ծրագրերին համապատասխան, անցնում են ուսուցում և գիտելիքների ստուգում	N 1049-Ն որոշում, հավելված, կետ 23						
8)	Համապատասխան աշխատատեղի աշխատողն ուսուցանված է, որ աշխատանքներն սկսելուց առաջ պարտավոր է ստուգել և համոզվել հանքախորշի, փորվածքի ամրակապի, առաստաղի և կողերի վիճակի, օդափոխության համակարգի, հանքախորշի մեխանիզմների և սարքավորումների սարքինության մասին, եթե բացահայտվում են անսարքություններ, որոնք ինքը չի կարող ինքնուրույն վերացնել, դրա մասին պարտավոր է հայտնել հերթափոխի ղեկավարին (լեռնային վարպետին)	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 26				0,1	Տեսողական, փաստաթղթային	
9)	Ստորերկրյա հանքում մեքենաներ, մեխանիզմներ և սարքավորումներ սպասարկող բոլոր աշխատողներն ուսուցանված են տրվող նախագրուշական ձայնային ազդանշանների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 35				0,1	Տեսողական, փաստաթղթային	
10)	Հանքահորի հորատանցման և ամրակապման աշխատանքներում ընդգրկված բոլոր աշխատողներն ուսուցանված են վերհան կայանքներից տրվող ազդանշանների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 59				0,1	Տեսողական, փաստաթղթային	
11)	Կազմակերպության բոլոր աշխատողներն ուսուցանված են էլեկտրահարումից և այլ վնասվածքային գործոններից տուժած աշխատողին առաջին օգնություն ցույց տալու	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 331				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	եղանակների իմացության հարցերով՝ համաձայն կազմակերպության ղեկավարության կողմից հաստատված ուսումնամեթոդական ծրագրերի							
12)	Բացահանքի բոլոր աշխատողները ծանոթացվել են բացահանքի շինությունների վրա, մարդկանց կուտակման վայրերում և շարժման երթուղիներում փակցված տեխնիկական անվտանգությանը վերաբերող ցուցադրական միջոցների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 13				0,1	Տեսողական, փաստաթղթային	
13)	Աշխատանքային գոտում գտնվող բոլոր աշխատողներն ուսուցանվել են նախքան մեքենասարքավորումների գործարկելն ու տրանսպորտային միջոցների շարժը տրվող լսելի (տեսանելի) ձայնային և լուսային ազդանշանների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 18				0,1	Տեսողական, փաստաթղթային	
14)	Բացահանքի աշխատողները տեղեկացվել են մարդկանց կյանքին սպառնացող վտանգավոր երևույթներ (մեքենասարքավորումների խափանումներ, սողանքի, հանքաստիճանի փլուզման, հրդեհի և արտակարգ այլ երևույթների առաջացման նշաններ) նկատելու դեպքում իրենց պարտականությունների մասին	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 19				0,1	Տեսողական, փաստաթղթային	
15)	Մարկշեյդերական ծառայության կողմից լցակույտի փլուզման կամ սողանքի հնարավոր հատվածակողմի որոշված չափերը պարբերաբար տեղեկացվում են լցակույտում աշխատող անձնակազմին	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 67				0,1	Տեսողական, փաստաթղթային	
16)	Կազմակերպության ղեկավարության կողմից հաստատված հրահանգներով կատարվել են ավտոտրանսպորտային միջոցներ վարող	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	աշխատողների տեխնիկական անվտանգության գծով հրահանգավորումներ	N 1050-Ն որոշում, հավելված, կետ 112						
17)	Անվադողեր հավաքակցող և տեղակայող աշխատողները հրահանգավորվել են կազմակերպության ղեկավարության կողմից հաստատված հրահանգներով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 113				0,1	Տեսողական, փաստաթղթային	
18)	Մեքենասարքավորումների վերանորոգման աշխատանքներ կատարող աշխատողները ծանոթացվել են գործատուի կողմից հաստատված հրահանգներին, օրացուցային պլաններին, որոնցով որոշվում են աշխատանքների կատարման կարգն ու հերթականությունը, դրանց անվտանգությունն ապահովող հարմարանքներն ու գործիքները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 185				0,1	Տեսողական, փաստաթղթային	
19)	Բացահանքի բոլոր աշխատողներն անցել են էլեկտրահարումից տուժած անձանց առաջին օգնություն ցույց տալու հրահանգավորում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 233				0,1	Տեսողական, փաստաթղթային	
20)	Էլեկտրաշարժարներն արդյունավետ աշխատող լեռնահանքային և տրանսպորտային միջոցներ շահագործող անձինք, որոնց աշխատանքը կապված է մեքենաների և էլեկտրասարքավորումների սպասարկման հետ, անցել են ուսուցում սահմանված կարգին համապատասխան	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 240				0,1	Տեսողական, փաստաթղթային	
21)	Ֆաբրիկայում նոր աշխատանքի ընդունված աշխատողներն անցնում են նախնական ուսուցում և գիտելիքների ստուգում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 16				0,1	Տեսողական, փաստաթղթային	

22)	Ֆաբրիկայում աշխատող բանվորական անձնակազմի ուսուցումը և գիտելիքների ստուգումն իրականացվում է ըստ մասնագիտությունների՝ ղեկավարության կողմից հաստատված ծրագրերին և թեմատիկ պլաններին համապատասխան	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 18				0,1	Տեսողական, փաստաթղթային	
23)	Ֆաբրիկայի բոլոր աշխատողները ծանոթացված են մեխանիզմների, մեքենանների, տրանսպորտային միջոցների գործարկումն սկսելուց առաջ տրվող ձայնային ազդանշանների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետեր 21, 50				0,1	Տեսողական, փաստաթղթային	
24)	Ֆաբրիկայի բոլոր աշխատողները ծանոթացված են աշխատատեղերում բարձրադիմակի դեպքում տրվող լուսային ազդանշանների նշանակությանը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 51				0,1	Տեսողական, փաստաթղթային	
25)	Օդափոխման համակարգերի և ռեագենտախտոդովակների հիմնական նորոգման, զննման, մաքրման, վնասագերծման աշխատանքներում ընդգրկված անձինք հրահանգավորվում են այդ աշխատանքների կատարման համար պատասխանատու անձի կողմից	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 224				0,1	Տեսողական, փաստաթղթային	
26)	Ֆաբրիկայի բոլոր աշխատողներն ուսուցանվում են էլեկտրահարումից և այլ վնասվածքային գործոններից տուժած մարդկանց փրկելու, նրանց առաջին օգնություն ցույց տալու եղանակների իմացության հարցերով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 274				0,1	Տեսողական, փաստաթղթային	
27)	Հալած ցինկով բունկերի ներպատվածքի լցումը կատարող աշխատողներն անցել են ուսուցում,	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական, փաստաթղթային	

	հրահանգավորում և ունեն համապատասխան որակավորում	N 1051-Ն որոշում, հավելված, կետ 381						
28)	Ռադիոակտիվ նյութեր պարունակող հանքաքար մշակող ֆաբրիկայի աշխատողներն անցնում են ճառագայթային անվտանգության հարցերով ուսուցում	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 404				0,1	Տեսողական, փաստաթղթային	
29)	Ֆաբրիկայի համապատասխան աշխատողներն ուսուցանվել են առաջին օգնության կազմակերպման ուղղությամբ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 444				0,1	Տեսողական, փաստաթղթային	
12.	Պահպանվել են կոլեկտիվ պաշտպանության միջոցներով աշխատավայրի (աշխատատեղի) կահավորման պահանջները.	Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, հոդված 255 և հոդված 247-ի մաս 3, Առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756-Ն հրաման						
1)	Ստորերկրյա լեռնային փորվածքները, որոնցում աշխատանքները ժամանակավորապես դադարեցված են, պաշտպանված են հոծ պատնեշներով կամ համապատասխան արգելափակիչ նշաններով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 29				0,05	Տեսողական, փաստաթղթային	
2)	Վերևից և ներքևից հուսալիորեն ծածկված են բոլոր չգործող ուղղաձիգ և թեք լեռնային փորվածքները	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 30				0,05	Տեսողական, փաստաթղթային	

3)	Բոլոր չգործող ուղղաձիգ և թեք լեռնային փորվածքները, որոնք օգտագործվում են օդափոխության համար, պարսպվա՞ծ են ամուր արգելապատով, ծածկվա՞ծ են վտանգը բացառող մետաղե ցանցով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 30				0,1	Տեսողական, փաստաթղթային	
4)	Լեռնային փորվածքները, որոնցում աշխատանքներն ավարտված են, փակվա՞ծ են մարդկանց մուտքն արգելակող միջնապատերով կամ ապահովիչ ցանկապատերով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 31				0,1	Տեսողական, փաստաթղթային	
5)	Ստորերկրյա աշխատանքների հետևանքով երկրի մակերևույթին առաջացած իջանցքները, անկումները և հնարավոր փլուզման գոտիների սահմանները ցանկապատվա՞ծ են	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 32				0,05	Տեսողական, փաստաթղթային	
6)	Մշակումն ավարտված մաքրահանման խցեր մուտք ունեցող փորվածքները փակված են	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 78				0,1	Տեսողական, փաստաթղթային	
7)	Խցերում հարկային և ենթահարկային փորվածքների ելքերը ցանկապատվա՞ծ են	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 102				0,1	Տեսողական, փաստաթղթային	
8)	Խորը հորատանցքերով հանքաքարի պոկման ժամանակ, լիցքերի պայթեցման հետևանքով հատման անցքեր առաջանալու դեպքում, խորը հորատանցքերում տեղադրվա՞ծ են անցքը փակող հարմարանքներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 91 ենթակետ 1				0,05	Տեսողական, փաստաթղթային	
9)	Հանքավայրը ենթահարկային հանքամիջանցքների եղանակով մշակման ժամանակ արգելապատվա՞ծ է հանքամիջանցքը դատարկ տարածությունից	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում,				0,1	Տեսողական, փաստաթղթային	

		հավելված, կետ 89 ենթակետ 6						
10)	Ստորերկրյա ապարաջարդիչ համալիրներ կիրառելու դեպքում նախատեսված են՝	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 103						
ա.	Ապարաջարդիչ մեքենաներից դուրս թռչող ապարների կտորներից (սյուներից) նախագուշացման և պաշտպանության միջոցներ					0,1	Տեսողական	
բ.	Փռչուց օդի մաքրման միջոցներ					0,1	Տեսողական	
գ.	Ապարաջարդիչը քարերից մաքրելու դեպքում աշխատողների անվտանգության միջոցներ					0,1	Տեսողական	
դ.	Ապարաջարդիչ մեքենայի օպերատորի պաշտպանության միջոցներ					0,1	Տեսողական	
11)	Լուծագատման եղանակով մաքրահանման աշխատանքներում լուծույթներով լցավորված տարողությունների 200 մմ-ից ավելի չափեր ունեցող դիտանցքերը գտնվում են փակ վիճակում, տարողությունների սպասարկման հարթակը ապահովված է 1,2 մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 194				0,1	Տեսողական	
12)	Ստորերկրյա հանքերի բոլոր հորիզոններում, վերին բաժանմունքների միջոցով մարդկանց անցումներն արգելափակելու համար հանքահորերի առջևից տեղադրված են պաշտպանիչ ցանցապատներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1049-Ն որոշում, հավելված, կետ 255				0,1	Տեսողական	
13)	Պահպանվել են բացահանքում շահագործվող ժապավենային փոխակրիչները բազրիքներով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի				0,1	Տեսողական	

	սարքավորված անցումային կամրջակներով կահավորելու, կամ փոխակրիչի տակով անցումները և ուղղանցումները պաշտպանական վահանակով սարքավորելու պահանջները	N 1050-Ն որոշում, հավելված, կետ 26						
14)	Ցանկապատվա՞ծ են բացահանքի առափները, որոնցով տեղի է ունենում մարդկանց հաճախակի տեղաշարժեր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 35				0,05	Տեսողական	
15)	Խցանով փակվա՞ծ են 250 մմ-ից ավելի հորատաբերանի տրամագծով հորատանցքերը	Կառավարության 2022թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 50				0,05	Տեսողական	
16)	Ավտոմեքենայի հետընթաց շարժը սահմանափակելու համար առկա՞ են բեռնաթափման հարթակների ամուր ապահովիչ պատնեշներ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 118				0,1	Տեսողական	
17)	Ձեռքով ապարաջոկման աշխատանքների ժամանակ ցանկապատվում է փոխակրիչի ժապավենը	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 144				0,05	Տեսողական	
18)	Հանքավայրի ցամաքեցման ժամանակ առաջացող փլվածքները, ճեղքերն ու հնարավոր փլվածքատեղերը հուսալիորեն արգելապատվու՞մ են	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1050-Ն որոշում, հավելված, կետ 295				0,05	Տեսողական	
19)	Ֆաբրիկայում աշխատանքային հարթակները, անցման կամրջակները և աստիճաններն ունեն 1 մետրից ոչ պակաս բարձրությամբ բազրիքներ, առավել ապահով անցատեղերում՝ 0,8 մետրից ոչ պակաս	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 26				0,1	Տեսողական	

20)	Հարստացման ֆարրիկայի հավաքակցման համար նախատեսված հարթակները, փոսիկները, խյուսափոսերը, ջրհորներն ու առուները ցանկապատված են 1 մետրից ոչ պակաս բարձրությամբ բազրիքներով	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 28				0,1	Տեսողական	
21)	Ֆարրիկայի մեքենաների ու մեխանիզմների ատամնային և շղթայական փոխանցումները, անկախ դրանց տեղադրման բարձրությունից և շարժման արագությունից, ունեն հոծ ճաղաշարքեր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 49				0,1	Տեսողական	
22)	Բունկերների բարձման և բեռնաթափման համար, աշխատանքային գոտիներ փոշու ներթափանցումը կանխելու նպատակով, կիրառվում են դոզավորիչ սարքեր	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 57				0,1	Տեսողական	
23)	Ռեազենտային բաժանմունքում առկա է օդափոխիչների աշխատանքների դադարեցումն ազդարարող ձայնային կամ լուսային ազդարարման համակարգ	Կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1051-Ն որոշում, հավելված, կետ 77				0,1	Տեսողական, փաստաթղթային	
